«ԵՐԵՎԱՆԻ ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԻ ԱՆՎԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ»

ՊՈԱԿ

ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

ԵՐԵՎԱՆ 2023

Հաստատված է տնօրենի

06.09.2023թ. № 98-2/2023-Լ հրամանով

Հաստատում եմ

Տնօրեն՝ Վ.Կիրակոսյան

ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատումը ֆորմալ կրթություն իրականացնելիս բազամաբովանդակ և համակարգային է .

1. *Ընթացիկ գնահատման համակարգ*- ուսանողների հաճախումների ամենօրյա ստուգում, առաջադիմության, գիտելիքների և գործնական կարողությունների ամենօրյա գնահատում 10 միավորային սանդղակով:
2. *Միջանկյալ ատեստավորման համակարգ*.-միջանկյալ ատեստավորումը իրականացվում է յուրաքանչյուր կիսամյակը մեկ անգամ (ստուգարքի դեպքում ուսանողները գնահատվում են «ստուգված», իսկ տարբերակված ստուգարքի և քննության դեպքում՝ 10 միավորային սանդղակով):
3. *Ամփոփիչ պետական ատեստավորման համակարգ*- ամփոփիչ պետական ատեստավորումը (ԱՊԱ) իրականացվում է ամփոփիչ պետական ատեստավորման ծրագրով հիմնական կրթական ծրագրի ողջ դասընթացը ավարտելուց հետո 2 փուլով՝ նախաավարտական պրակտիկա, որն ավարտվում է հաշվետվությամբ և պետական քննություններ (միջառարկայական՝ համալիր, դիպլոմային աշխատանքի պաշտպանություն): Վերջինս իրականացվում է ՀՀԿԳՄՍ նախարարության կողմից մշակված վարման կարգով(ՀՀԿԳ նախարարի 21.07.2006թ. № 638-Ն հրամանով):

Պետական որակավորող հանձնաժողովի նախագահին, ըստ մասնագիտական ուսումնական հաստատության ենթակայության , նշանակում է համապատասխան նախարարությունը կամ գերատեսչությունը՝ մասնագիտական ուսումնական հաստատության տնօրենի առաջարկությամբ տվյալ ոլորտի առավել բարձրակարգ մասնագետների թվից, որոնք չեն աշխատում տվյալ ուսումնական հաստատությունում:

ԱՊԱ պետական քննական հանձնաժողովների (ՊՔՀ) նախագահների թեկնածությունը, որը առաջարկում է քոլեջը գործատուներից, հաստատում է ՀՀԿԳՄՍ նախարարությունը: Քննություններից հետո նա գրավոր հաշվետվություն է ներակայացնում քոլեջ և ՀՀԿԳՄՍ նախարարություն ներկայացնելով քննության արդյունքները, իր կարծիքը և առաջարկությունները:

Պետական որակավորող հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու նպատակով կարող են հրավիրվել նաև համապատասխան ոլորտի գործատուներ, նրանց ներկայացուցիչներ, այլ մասնագիտական , այդ թվում նաև բարձրագույն, ուսումնական հաստատության ներկայացուցիչներ: ԱՊԱ քննություններին կարող են մասնակցել նաև հրավիրված անձնավորություններ սոցիալական գործընկերներից ԱՊԱ քննությունների ժամանակ ուսանողների գիտելիքները և գործնական կարողությունները գնահատվում են 10 միավոր սանդղակով: Պետական քննական հանձնաժողովի կողմից դրական միավոր ստացած շրջանավարտներին շնորհվում է համապատասխան որակավորում և պետական

նմուշի դիպլոմ, ընդ որում, գերազանց առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտներին՝ գերազանցության դիպլոմ:

4.***Դասախոսական կազմի գործունեության գնահատման համակարգ***-գնահատումը կատարվում է պարբերաբար դասալսումների, ուսանողների շրջանում կազմակերպվող հարցումների միջոցով: Դասախոսական կազմի կողմից կատարված աշխատանքներն ու դասավանդման որակական ցուցանիշները գնահատում է՝ ըստ սահմանված չափանիշների և ցուցանիշների, որոնք ընդհանուր առմամբ ընդգրկում են նեքոգրյալ սկզբունքները.

- Քոլեջի ներքին կարգապահական կանոնների պահպանումը,
- դասին նախապատրաստված լինելը,
- դասաժամանակի ռացիոնալ օգտագործումը,
- ուսումնական խմբի հետ աշխատանքների կազամկերպումը՝ հաշվի առնելով ուսանողների անհատական առանձնահատկությունները (տարբերակված կամ անհատական մոտեցում),
- մանկավարժական էթիկան, աշխատանքային ոճը, վերվելակերպն ու խոսքի կուլտուրան, հաղորդակցության հմտությունները և այլն,
- հասարակական ակտիվությունը,
- հանձնարարականների կատարողականը,
- իր գիտելիքների, կարողությունների ինքնակատարելագործումը և ինքնազարգացումը:

Դասախոսի գնահատման վերջնարդյունքը հետևյալն է՝

1. համապատասխանում է իր պաշտոնին,
2. սկսնակ է ,
3. ունի մանկավարժական վարպետություն,
4. չի համապատասխանում իր պաշտոնին:

5.Շենքի հնարավորությունների գնահատման համակարգ- քոլեջի առաքելությունը իրականացնելու համար առաջնահերթ է շենքային պայմանները վարչական, ուսումնական, լաբորատոր և օժանդակ հարմարություններով, նյութատեխնիկական բազայով, որոնք պետք է բավարարեն կրթական գործունեություն իրականացնելու համար երաշխավորվող լիցենզավորման պահանջները, լինի անվտանգ և ապահովի սանիտարահիգենիկ նորմերը: Այն չունի գնահատման սահմանված հստակ ժամանակահատված: Գնահատումը ընթացիկ է, իրականցվում է հիմնակնում նոր ուսումնական տարվա նախապատրաստական փուլում, կարիքների բացահայտման և գույքագրման ժամանակ:

6. Ուսումնամեթոդական հիմքի գնահատման համակարգ- կատարվում է տարվա ընթացքում և հաշվետու ժամանակահատվածում,

- ուսումնածրագրային փաթեթի առկայության ստուգում(պետական կրթական չափորոշիչ, ուսումնական պլան, ուսումնական ծրագիր և այլն),
- մատենավարության ստուգում,
- ուսուցման ձևերի և մեթոդների կիրառման ստուգում,
- դասավանդման, ուսումնառության նյութերի, պլանների առկայության ստուգում,
- դիդակտիկ և ուսումնական նյութերի, ժամանակակից տեխնիկական միջոցների առկայության և կիրառման ստուգում,
- ուսումնական ծրագրերին և գիտության ժամանակակից պահանջներին դասի բովանդակության համապատասխանության ստուգում,
- դասավանդման նյութի, պլանի առկայության շարադրման մատչելիության գնահատում,
- դասի տեսակի ընտրման նպատակահարմարության գնահատում,
- դասի կառուցածքի սահամանում,
- տեսականի և պրակտիկայի կապի ապահովում,
- ներառարկայական և միջառարկայական կապերի հաստատում,
- ամբիոնների աշխատանքային գործունեության ստուգում,
- դասալսումների, ուսուցողական և բաց դասերի իրականացում,

- ուսանողների առաջադիմության, հաճախումների ստուգում,
-վիճակագրական հաշվառում(պետական վիճակագրական հաշվետվություն՝ Ձև N2 գրառում),
- աշխատանքային պլանների և հաշվետվությունների առկայություն:

7. Ֆինանսատնտեսական հիմքի գնահատման համակարգ- քոլեջը ակտիվների պարտավորությունների և տնտեսական գործառույթների հաշվապահական հաշվառումը վարում է բնաիրային չափանիշների հիման վրա՝ դրամական արտահայտությամբ, դրանց համընդհանուր, անընդհատ փաստաթղթային և փոխկապակցված արտացոլման միջոցով:

Հաշվապահական հաշվառման խնդիրներն են՝

- տնտեսական գործառույթների և կազմակերպության գործունեության արդյունքների վերաբերյալ ամբողջական և արժանահավատ տեղեկատվությամբ ձևավորումը,
- գույքի առկայության, շարժի, նյութական աշխատանքային և ֆինանսական միջոցների (ռեսուրսներիի) օգտագործման նկատմամբ վերահսկողության ապահովումը:
- ֆինանսատնտեսական գործունեության բացասական երևույթների մասին ժամանակին զգուշացումը ներտնտեսական պահուստների բացահայտումն ու հավաքագրումը:

Հաշվապահական հաշվառման վարման հիմնական կանոններն են՝

1. ՀՀ արժույթով՝ հայկական դրամով:
2. Կրկնակի գրանցման եղանակով՝ հաշվապահական հաշվառման հաշվային պլանի համապատասխան:
3. Վերլուծական (մանրամասնեցված) հաշվառման և սինթետիկ (ընդհանրացված) հաշիվների տվյալները պետք է համապատասխանեն միմյանց:
4. Բոլոր տնտեսական գործառույթների արդյունքները պետք է ժամանակին գրանցվեն հաշվապահական հաշվառման հաշիվներում:

Ֆինանսական հաշվառման մեթոդաբանության ընտրված տարբերակներից են՝

- հիմնական միջոցներ՝ ոչ նյութական ակտիվներ, պաշարներ,
- անհուսալի դեբիտորական և կրեդիտորական պարտքեր,
- արժեքավորման և ֆինանսական արդյունքների որոշման ժամանակաշրջան,
- հասույթի ճանաչում, արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները,
- դրամային հոդվածներ և գործառնական վարձակալություն:

8. Շրջանավարտների կարիերայի գնահատումը՝

Առաքելության և նպատակների իրականացման վերջնարդյունքը մասնագետի պատրաստումն է: Որպես շրջանավարտ, ավարտում է ընտրած մասնագիտությանն ողջ դասընթացը, ստանում է որակավորում և մտնում աշխատաշուկա:

Շրջանավարտի կարիերայի գնահատում.

1. ***Գործատուի գնահատում-*** նա ունի իր պահանջները և ակնկալում է աշխատանքին պատրաստված գիտելիք և գործնական կարողություններ ունեցող աշխատաշուկայի աշխատանքները բավարարող հոսալի, ազնիվ, պատասխանատու, պարտաճանաչ, կազմակերպված, տեխնիկապես գրագետ կարգ ու կանոնին ենթարկվող
2. ***Շրջանավարտի ինքնագնահատում-*** աշխատանքի նկատմամբ պետք է ունենա դրական վերաբերմունք, սիրի իր մասանագիտությունը, հպարտանա իր գործով և իր ձեռք բերած հմտություններով: Աշխատանքը դարձնի սովորելու, ընդօրինակելու և նախաձեռնելու գործընթաց: Պահպանի ենթակայությունը,լսի իր ղեկավարներին ու գործընկերներին, կրի կորպորատիվ պատասխանատվություն, թիմային աշխատանքի և հաղորդակցման ունակություններ:
3. ***Քոլեջի պրակտիկայի և կարիերայի բաժնի պատասխանատուի կողմից կատարվող աշխատանքներ և արդյունքի գնահատում –***շրջանավարտներին ծանոթացնում է իրենց մասանագիտության որակավորման բնութագրին, աշխատանքային օրենսգրքի դրած դրույթներին (աշխատանքային պայմանագրեր, աշխատաժամանակ, աշխատավարձ և այլ), որպեսզի աշխատանքի ընդունվելիս իմանան իրենց իրավունքները: Կապ են հաստատում գործատուների հետ, ապահովում նրանց մասանկցությունը ուսումնական

կրթական որոշ գործընթացների (Ընդհանուր ժողով, ՊՈՀ, միջոցառումներ սոտուգատեսներ, կոնֆերանսներ և այլն): Ավարտելուց հետո սերտ կապ են ապահովում շրջանավարտի հետ, տալիս երաշխավորագրեր շարունակական կրթություն կամ բնութագիր՝ աշխատանքի տեղավորման համար: Ընդ որում, երաշխավորագրերը և բնութագրերը տրվում են այն շրջանավարտներին, ովքեր մրցունակ են աշխատաշուկայում:

Աշխատանքի ընդունվելու համար շատ կարևոր գործոններ են համարվում.

- Ուսանողի ձեռք բերած գիտելիքների մակարդակը,
- Ստացած կրթության որակը:
- Թափուր աշխատատեղի առկայությունը:
- Ուսումնական հաստատության վարկանիշը:

10. ***Առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատումը ոչ ֆորմալ***

Կրթություն իրականացնելիս նույնպես համակարգային է , սակայն ավելի պարզ՝ ընթացիկ և ամփոփիչ: Ոչ ֆորմալ լրացուցիչ կրթությունը իրականացվում է կաճաժամկետ վերապատրաստման դասընթացներով: Քոլեջը պլանավորում է նաև պատրաստել երգիչ-կատարողներ, ռեժիսորներ, դերասաններ, լուսանկարիչներ, մոդելավորող- նախագծողներ՝ հագուստի, դերասաններ՝ համույթի,նկարիչ-նկարիչ վերականգնողներ, կոսմետոլոգներ, դերասաններ՝ էստրադայի, երաժիշտ- կատարող, դասավանդողներ և հաշվապահներ: Կարճատև վերապատրաստման դասընթացների արդյունքում ունկնդիրները ձեռք են բերում գործնական հմտություններ, իսկ արդյունքը գնահատվում է թեստային քննությամբ և գործնական փորձությամբ՝ որպես ստուգատես: